


ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1920 - օգոստոս - 1920

Մեղոի Շիրակացի. — Մինչև երբ.	225
Սեղոի Միսնոսյան. — Հեկեկ (ողբերգութիւն)	229
Վ. Յ. Մարտիրոսյան. — Զինուոր եւ (բանաստ.)	234
Հ. Խ. Սեփուր. — Դիտողութիւն փայլածուի եւ արուսեկի վրայ	235
Սրբազան Թալան. — Առ յետին լուսայն. (բանաստ.)	240
Հ. Ս. Տեմ-Մովսէսյան. — Փառքի զաւակներ	241
Մ. Յ. Բարթոլոմէոս. — Հով մը կ'անցնի սրտէս (բանաստ.)	246
Հ. Ա. Տեմուր. — Գրախօսական	246
Վարդանան. — Թագունին (աւանդավէյ)	249
Լեւոն Լեւոն. — Իմ Պապիկին մենութեան երգը (բանաստ.)	224
Արսէն Երզն. — Վերջին օրհնութիւն	219

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱԾ ԵՆՔ



ՄՈՒՐԱՍԻ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ Միջգեղն Պաշտում: Գրի առաւ Զապէլ Եսայեան: 1920: Հրատարակութիւն «Հայրենիք»ի, Պոսթօն, Մէս: (Միջակ էջ 137, Մուրատի ուղղագրաբար նկարով):

Շահան Նարայի, — Բեքի, — 1914-1920, Բոստոն: (Ընտիր թուղթի վրայ, լայն լուսանցքով, մեծագիր 116 էջ, Գինն է 1 տոլար՝ ստանալու համար գիմել հեղինակին, 13 Shawmut St. Boston, Mass. U. S. A.

Խոսրով (Արմէն Արտոնց). — ԱՅԳԵՍՏԱՆ, գիրք Ա. 1908-1919, փարիզ, տպ. Կ. Յ. Ներսէս: (Ամբողջական հաւաքածոյ ամէն սեռէ յուզածոց, անտիպ էջերու եւ երգերու. մաքուր տիպ, մեծագիր 502 էրես, գին՝ ֆր. 100): Ստանալու համար գիմել 7 Bridge Terrace, Maidistane (Angleterre).

Armenian Red Cross and Refuge Fund. Fifth annual report 1919, (փոքր էջ 20).

Տեղեկագիր Հայ Բժշկական Առաքելութեան (Կիլիկիա) Մայիս-Օգոստոս 1919: փարիզ, Տպր. Ե. Թերապեան 1920: (Պատկերազարդ մեծակա 48 էջ):

«ՊԱՆԱ»ի մեծապատիւ Խմբագրութեան, հետեւել ազգօգուտ բոլորիկները. — Զորավար Անդրանիկի փրկութեան հանգանակութեան կոչը

Ամերիկահայ զաղորդին: Մեծ Ժողով, նախաձեռնութեամբ Փ. Հ. Պոստոնի Ծանօնարան: Կիլիկի (11 Գունուար), — Հրապարակային Մեծ Ժողով (1919 Դեկտ. 28ի) հովանաւորութեամբ Զոր. Անդրանիկի նախաձեռնութեամբ Հայաստանի վերաշինութեան Տիկնանց Միութեան, — Բողոքի Մեծ Միջինի, Նախաձեռնութեամբ Ս. Դ. Հ., Վ. Հ. Կ. Կոչակցութեանց եւ Հ. Յ. Դաշակցութեան՝ Նիւ Եօքքի տեղական մասնաձիւղերուն (Մարտ 7), Մարտիոյ Կրթասիրաց Ընկերութեան Պոսթօնի մասնաձիւղին Հանգանակութեան Ժողովը (1919 Դեկտ. 21), — Հանդես, ընթերիք, ներկայացում՝ նախաձեռնութեամբ Խորհրդի կրթ. եւ Նպաստամատոյց Միակնցի Ընկերութեան Պոսթօնի Կանանց Մասնաձիւղի (Մարտ 28ի), — Շրջաբերական կոչ փրկութեան Հանգանակութեան:

Պարոն Արշակ Սաֆրաստեանէ՝... Cilicia and Armenia (էջ 11). Twelfth Report of the «Women's Armenian Relief Fund» 1916-20 (էջ 24). «Witnesses for Crist» by Mr. R. Alger Oram (4 էջ).

Պարոն Ա. Աթանասեան՝ L' Eclair 11.462, L'Humanité 5961, 5963, 5964, La Lanterne 15.696, La Victoire 1661, L'Œuvre 1755.

Օ Ր Է Ն Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ

ՓՈԽԱՌՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հաստատած է 1920 թ. Յունիսի 10-ին
համաձայն Հայաստանի Պարլամենտի
1920 թ. Յունիսի 5-ի օրէնքի:

1. Հայաստանի Հանրապետութեան արդիւնաբերական ոյժերը և տընտեսութիւնը վերականգնելու և Հանրապետութեան թղթագրամների ֆոնդն ապահովելու նպատակով կնքել 20 միլիոն Ամերիկեան դոլլարի անւանական գումարի Պետական փոխառութեան 6 տոկոսով, փոխառութեան 75 տոկոսը յատկացնել վերոյիշեալ նպատակին. իսկ 25 տոկոսը գործադրել Պետական կարիքներին համար:

2. Սոյն փոխառութիւնը մտցնել Հանրապետութեան պարտքերի մատեանը Հայաստանի Անկախութեան փոխառութեան անունով:

3. Փոխառութեան պարտաթղթերը (օրիգացիաները) բաց թողնել 10, 25, 50, 100, 500, 1000 դոլլար արժողութեամբ ներկայացնողին վճարելու պայմանով:

4. Պարտաթղթերի տարեկան եկամուտը սահմանել 6 տոկոս, հաշւելով 1920 թ. Յուլիսի 2-ից, իսկ վճարումն սկսել 1921 թ. Յունւար 2-ից և վճարել կէս տարին մի անգամ:

5. Ամբողջ փոխառութիւնը աստիճանաբար մարել ոչ ուշ քան մինչև 1930 թ. Յուլիս 2-ը, սկսելով 1925 թ. Յունւար 2-ից և ամեն տարի վիճակ հանելով Յուլիսի 1-ին և Յունւարի 2-ին: Վիճակով ելած պարտաթղթերի արժէքը վճարել ելած օրից 6 ամիս յետոյ: Փոխառութիւնը մարելու նպատակով, սկսած 1925 թ. Յունւար 2-ից, յատկացնել փոխառութեան անւանական գումարի 8,3 տոկոսը առաջինն 11 կիսամեակներից ամեն մէկի ընթացքում և 8,7 տոկոսը 12-րդ կիսամեակում:

6. Կտրոնների և վիճակով ելած պարտաթղթերի դրամագլխի վճարումը Հայաստանում կատարել Պետական Բանկում և նրա բաժանմունքներում դոլլարներով կամ ռուբլիներով ըստ օրւայ կուրսի, իսկ Եւրոպական Ամերի-

կեանք և Ստեփան Կոնստանտինովիչ, վճարել ֆինանսների նախարարի մատնանշած հիմնարկութիւններում տեղական վալիտայով և նոյնպէս ըստ օրւայ կուրսի:

7. Պարտաթղթերի արժէքը գօլլարներով չի վճարելու դէպքում, տեղական վալիտայի և գօլլարի փոխարաբերութիւնը որոշուում է օրւայ կուրսով փոխառութեան բաժնեգրութիւնը սկսելու ժամանակ:

8. Մինչև 1930 թ. Յուլիսի 2-ը կառավարութիւնը սոյն փոխառութեան ամբողջական կամ մասնակի վերադնում չպէտք է կատարէ. ինչպէս նաև պէտք չէ որ և է փոփոխութեան ենթարկէ նրան:

9. Սոյն փոխառութեան պարտաթղթերի կտրոնները, ինչպէս նաև մարւելու ենթակայ պարտաթղթերը իրենց վճարման ոյժը պահում են 10 տարւայ ընթացքում սկսած սոյն օրէնքի նախատեսած հատուցման օրից:

10. Հայաստանի Հանրապետութեան սահմաններում սոյն փոխառութեան կտրոնները ընդ միշտ ազատ են ամեն տեսակի տուրքերից:

11. Ներկայ փոխառութեան պարտաթղթերը տեղադրել ֆինանսների նախարարի մատնանշած բանկային տներ, վարկային և այլ հիմնարկութիւնների միջոցով Նախարարի մշակած և Նախարարների խորհրդի կողմից հաստատւած պայմաններով:

12. Ֆինանսների Նախարարը փոխառութիւնը բաց թողնելու պէս որոշում է ներկայ փոխառութեան պարտաթղթերի և կտրոնների վայելած իրաւունքներն ու առաւելութիւնները զանազան վճարումների (օրինակ մաքսային, պետական և այլ տուրքերի) ժամանակ:

13. Ներկայ փոխառութեան պարտաթղթերի տոկոսները, ինչպէս և նրա կնքման հետ կապւած սոյն տարւայ ծախսերը հոգալ փոխառութեան գումարից, իսկ յետագայ տարիների ընթացքում սոյն փոխառութեան աստիճանական մարումը և տոկոսների հատուցումը կատարել Պետական Ելևմուտքային մասին գոյութիւն ունեցող կանոնների հիման վրայ:

14. Ներկայ փոխառութիւնը ապահովել Հայաստանի Հանրապետութեան ամբողջ գոյքով:

Նախարարապետ
ՀԱՄԾ ՕՀԱՆՋԱՆԵԱՆ

Ֆինանսների Նախարար
Ա. ԳԻՒԼԻԱՆԿԱՆԵԱՆ

Նախարարների խորհրդի
Գործերի Կառավարիչ

Դիւանի Չարիչ